ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«26.01» 2021թ
No 123

ՔԱՂԱՔԱՑԻ ԳՎԻԴՈՆ ԳՎԻԴՈՆԻ ԼԱԶԱՐՅԱՆԻՆ
ՀԱՍՑԵ՝ ԱՐՄԱՎԻՐ, Գ. ԱՐՄԱՎԻՐ 54 ԹՂՄ.,29,Տ (0918)
ՀԾՀ 3209760101

Հարգելի հարկ վճարող

ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված շարժական գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ Ձեր կողմից 17.11.2020 թվականին օտարվել է 2006 թվականի արտադրության, 260 ձիաուժ հզորությամբ TOYOTA 4 RUNNER 4.7 մակնիշի տրանսպորտային միջոցը «ՀՀ-ՅՈՒՄ ԱՄՆ-Ի ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ» օտարերկրյա իրավաբանական անձի ներկայացուցչությանը (ՀՎՀՀ՝ 00022894) 200,000 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 29-րդ հոդվածի համաձայն՝ հարկային գործակալը հարկ վճարողներին եկամուտներ վճարող (հատկացնող կամ բնամթերային ձևով տրամադրող)՝ Օրենսգրքի 58-րդ գլխով սահմանված կարգով հարկային մարմնում որպես հարկ վճարող հաշվառված կազմակերպությունն է, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը, որի վրա, Օրենսգրքի համաձայն, դրված է հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս (հատկացնելիս կամ բնամթերային ձևով տրամադրելիս) նրանց եկամուտներից հարկերը կամ վճարները հաշվարկելու, պահելու (գանձելու) և ՀՀ պետական բյուջե վճարելու պարտավորությունը:

Հաշվի առնելով այն, որ «ՀՀ-ՅՈՒՄ ԱՄՆ-Ի ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ» օտարերկրյա իրավաբանական անձի ներկայացուցչությունը չի հանդիսանում հարկային գործակալ՝ Ձեզ մոտ վերը նշված օտարման գործարքի մասով առաջանում է եկամտային հարկ հաշվարկելու և ՀՀ պետական բյուջե վճարելու պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է մինչև 2021 թվականի ապրիլի 20 ներառյալ էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել (ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.12.2016թ. N300-Ն հրամանի N3 հավելվածով) 2020 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող եկամտային հարկի գումարը՝ Օրենսգրքի 150-րդ հոդվածով սահմանված դրույքաչափով:

Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Դուք իրավունք ունեք հարկային մարմին ներկայացնել բացատրություններ:

Հարգանքով՝

ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԿԱՄԵՐԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԹԻՎ 4 ԲԱԺՆԻ ՊԵՏ ԼԻԱՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ

Կատարող՝
Կամերալ ուսումնասիրությունների և վերլուծության թիվ 4 բաժնի
Գլխավոր հ/տ Ա.Շահբազյան
Հեռ.՝ 011 544 055 ներքին 4048
Էլ. փոստի հասցե՝ secretatiat@petekamutner.am